«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեման՝ Կորեայի պատմություն

Կատարող՝ Տիգրան Գրիգորյան, 10-րդ դասարան

Ղեկավար՝ Վարդան Կարապետյան

Խորհրդատու մասնագետ՝ Անի Հարությունյան /Երևանի Վ. Բրյուսովի անվան համալսարանի դասախոս

Գրախոս՝ ԵՊՀ Համաշխարհային պատմության ամբիոնի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Սմբատ Հովհաննիսյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն
2. Գլուխ 1. Հին Չոսոն
3. Գլուխ 2. Եռաթագավորություն
4. Գլուխ 3. Եռաթագավորության դարաշրջանի մշակույթ
5. Գլուխ 4. Կորյո
6. Գլուխ 5. Կորյո դարաշրջանի մշակույթ:
7. Գլուխ 6. Չոսոն
8. Գլուխ 7. Կերոայի մշակութային նվաճումները XVդ.-IXդ. սկիզբ
9. Գլուխ 8. Կորեան Ճապոնիայի տիրապետության տակ
10. Գլուխ 9. Կորեայի ազատագրումը
11. Գլուխ 10. Պատերազմ Հյուսիսի և Հարավի միջև
12. Գլուխ 11. Ինտերնետային հեղափոխություն և տնտեսություն Հարավային Կորեայում
13. Գլուխ 12. Հետաքրքիր փաստեր հարավային Կորեայի մասին
14. Գլուխ 13. Հետաքրքիր փաստեր հյուսիսային Կորեայի մասին
15. Եզրակացություն
16. Օգտագործված գրականության ցանկ

Ներածություն

Հետազոտական աշխատանքը նվիրված է Կորեայի պատմությանը: Շատերին, կարծում եմ հետաքրքիր կլինի, թե ինչո՞ւ հենց Կորեան: Նախ Կորեա պետության պատմությունը ինձ հետաքրքրել է դեռ միջին դպրոցում սովորելու շրջանից, բազմաթիվ թարգմանություններ եմ կատարել, որոնց արդյունքում Կորեայի մասին հարուստ տեղեկություններ եմ հավաքել իմ բլոգում, և երկրորդ՝ Կորեայի մասին հայալեզու տեղեկությունները շատ քիչ են, որի պատճառով ես սկսեցի ուսումնասիրել այդ երկրի պատմությունը: Եվ հիմա, երբ մեզ տրված է հնարավորություն իրականացնելու հետազոտական աշխատանք, սա հարմար առիթ է Կորեայի մասին իմ բազմաթիվ թարգմանություններն ու ուսումնասիրությունները վերանայելու, թարմացնելու, լրացնելու, հավաքելու և դարձնելու ամբողջական աշխատանք:

Հետազոտական աշխատանքի սկիզբը բավականին բարդ էր և ծավալուն, քանի որ աղբյուրները շատ էին ու չէի կարողանում կողմնորոշվել՝ ինչից պետք է սկսեմ: Կազմեցի պլան, որին սկսեցի հետևել: Նախ և առաջ կազմեցի բոլոր կարևոր տարեթվերի կմախքը և ըստ դրանց սկսեցի հավաքել իրադարձությունները: Մի իրադարձությունից բխում էր մեկ այլ իրադարձություն, մեկ այլ կարևոր անուն, որը հետք է թողել Կորեայի պատմության մեջ: Աստիճանաբար երևաց ընդհանուր պատկերը, որը սկսեցի լրացնել այլ հետաքրքիր տեղեկություններով:

Կորեայի պատմությունը սկսվում է հին ժամանակներից՝ բրոնզե դարից, որին հաջորդում են տարբեր դարաշրջանների պետություններ՝ Հին Չոսոնից մինչև ժամանակակից Կորեա, որը հետագայում բաժանվում է երկու պետությունների: Դարերի ընթացքում իրականացվել են տևական կռիվներ տարածքների համար, պայքար թագավորների միջև, թե ով է կառավարելու, և պայքար գյուղացիների ու ազնվականների միջև: 15-րդ դարում սկսվում է «լուսավոր միապետի»՝ Վան Սեջոնի, թագավորությունը, որը համարում են «լուսավորության դարաշրջան», քանի որ ստեղծվեց կորեական այբուբենը՝ հանգրլը, որպես կրոն՝ ընդունվեց կոնֆուցիականությունը և վերջ դրվեցին զոհաբերություններին: Այդ ամենը լավ է, սակայն Սեջոնին վերագրած հայտնագործությունների մեծ մասը պատմաբանները վերագրում են մեկ այլ անձնավորության:

Ինչպե՞ս Կորեան ազատվեց Չինաստանի և Ճապոնիայի տիրապետությունից, ինչո՞ւ Կորեան բաժանվեց երկու մասի, չէ՞ որ մինչև 1948թ. այն միասնական էր, և այլ հետաքրքիր հարցերի պատասխաններ կիմանաք այս հետազոտական աշխատանքում։

Գլուխ 1. Հին Չոսոն

Կորեական պետականության աղբյուրները, սովորաբար, կապում են Հին Չոսոնի /Կո Չոսոնի/ հետ: Այն առաջին քաղաքական միավորումն էր, որի առաջացման տարեթիվը կապում են բրոնզե դարի հետ, մոտավորապես ք.ա. IV դ.: Ըստ հին ավանդազրույցների, այդ պետության հիմնադիր է համարվում Դանգունը՝ առասպելական Աստծո և արջից փոխակերպված կնոջ որդի: Երբ խոսքը գնում է երկրի պատմության սկզբի մասին, Կորեայում հիշում են ք.ա. 2335թ.՝ Դանգունի կառավարման տարեթիվը:

Ք.ա. 6-5 դդ. Կորեայի տարածքում ամենախոշոր ստրկատիրական պետությունը Չոսոնն էր: Ք.ա. 109թ. չինական Հան կայսրությունը նվաճեց Չոսոնը:

Գլուխ 2. Եռաթագավորություն

Առաջին հազարամյակի ընթացքում այս տարածքում առաջացան և սկսեցին զարգանալ Գոգուրեո, Պեկչե, Սիլլա ֆեոդալական պետությունները: Այդ ժամանակաշրջանը պատմության մեջ մտավ իբրև Եռաթագավորություն: Չնայած ընդհանուր լեզվի, հավատքի և քաղաքական սկզբունքների կառուցվածքի նմանությանը, երեք կորեական պետությունները միշտ կռվում էին հողատարածքների համար և պատերազմները չէին դադարում: Սիլան, որտեղ պետականությունն ավելի ուշ հաստատվեց (VI դարի սկիզբ), բարեկամական կապեր հաստատեց չինական Հանյան կայսրության հետ, որը Գոգուրեոյի ոխերիմ թշնամին էր:

Դաշնակցելով հանյանցիների հետ, Սիլլան կարողացավ հաղթել Պեկչեն (660թ.), այնուհետև Գոգուրեոն:

VIII դարում բոլոր շրջանները միավորված էին Սիլլա պետության կազմում:

Աստիճանաբար փոխվում էր նաև մարդկանց հավատքը: Նախկինում պաշտում էին Երկինքն ու լուսինը, բայց չինական գրի հետ միասին 1-ին հազարամյակում Կորեա ներխուժեց կոնֆուցիականությունը: Կառուցվեց Թիեհակ դպրոցը Սոնկյունգվանում, որտեղ ուսումնասիրում էին կոնֆուցիական ստեղծագործություններ: IV դարում սկսեց ժողովրդականություն վայելել բուդդայականությունը և 527թ. Այն ընդունեցին որպես պետական կրոն:

VII դարում եկավ դաոսականությունը և դուրս մղեց բուդդայականությունը: Չնայած այդ փոփոխություններին, կրոնի պատճառով Կորեայում բախումներ չկային: Սիլլա պետությունը գոյատևեց ընդամենը 2,5 հարյուրամյակ: IX դարից երկրի դրությունը դժվարացավ: Պետությունում սկսվեցին ապստամբություններ, ինչի արդյունքում Սիլլան անկում ապրեց:

Գլուխ 3. Եռաթագավորության դարաշրջանի մշակույթ

Երեք պետությունների պատմության հենց սկզբից հավատքը տեղական էր, այսինքն՝ ի սկզբանե բնորոշ այն ժողովուրդներին, որոնք եկել էին Կորեական թերակղզի նեոլիթյան ժամանակաշրջանում: Դրանք բոլորը պայմանականորեն կարելի է անվանել շամանիզմ: Սարոյի՝ ապագա Սիլլա պետության,առաջին կառավարիչներին անվանվում էին չհաչհաուն, ինչը կապված էր «շաման» հասկացության հետ: 4-րդ դարից Բուդդայականությունը սկսեց տարածվել Կորեական թերակղզում և համարվեց երեք պետությունների գերիշխող կրոն: Բուդդայականությունը, ի սկզբանե, հնդկական կրոն էր և Կորեա է ներթափանցել Չինաստանից: Ամենից շուտ բուդդայականությունն ընդունվեց Գոգուրեոյում: Վերջինն ընդունեց Սիլլա թագավորությունը՝ 6-րդ դարում, ինքնիշխան Փոպխին վանի (514-539թթ.) օրոք: Նրա անունը հենց նշանակում է «Բուդդայական օրենքի բարգավաճման թագավոր»:

Կոնֆուցիականությունը սկսեց տարածվել Գոգուրեոյում, Պեկչեյում և Սիլլայում ավելի շուտ քան բուդդայականությունը կամ, գրեթե միաժամանակ, բայց, ամենայն հավանականությամբ, չինական գրերի ներթափանցման հետ միաժամանակ: Դպրությունը հնարավոր չէր յուրացնել առանց տեքստերի, որոնք գրված էին այդ գրերի օգտագործմամբ: Չինաստանի ամենահին կանոնական գրությունները կոնֆուցիական տեքստերն էին: Ուստի, հիերոգլիֆային գրության հետ մեկտեղ, կոնֆուցիականությունը ներթափանցեց Կորեա:

Գլուխ 4. Կորյո

Կորեայում հայտնի և հարգալից մարդկանցից մեկը դա երկրի միավորող Վան Դոնն էր (Թիե Ջո կայսրը 918-943 թթ.): 918թ. Թիե Ջոն հիմնեց պետություն, որը անվանվեց Կորյո (ըստ ավանդության՝ Կորյո անունից առաջացել է երկրի եվրոպական անվանումը): Եռաթագավորության դարաշրջանն ավարտվեց, երբ 936թ.

Կորյոն նվաճեց Սիլլան և Հուպեկչեն: Առաջին կորեական պետության մայրաքաղաքը տեղափոխվեց Վան Դոնի հայրենիք՝ Կեսոն (այժմ Հյուսիսային Կորեայի ամենահարավային քաղաքն է): Վան Դոնը ստեղծեց հզոր վարչական համակարգ: Առաջացավ յանբանների (ազնվականների) դասակարգ, որը բաժանված էր զինվորական և քաղաքացիական պաշտոնակատարների: Նրանք գերիշխում էին ազատ գյուղացիներին, ինչպես նաև ունեին ստրուկներ:

Թիե Ջոի մահից հետո պետությունը կառավարում էին նրա որդիները՝ Վան Մու (Հեջոն կայսր, 944-945 թթ), Վան Յո (Չոնջոն կայսր, 945-949 թթ.), Վան Սո (Կվանջոն կայսր, 949-975թթ.): Վերջինս Կորյոն վերածեց կենտրոնացված կրթության: Սկսեցին վարձակալել չինացի գիտնականներին, որոնք օգնում էին անցկացնել բարեփոխումներ: Կվանջոն որոշեց, որ այսուհետ պաշտոնակատարի պաշտոն ստանալու համար անհրաժեշտ է հանձնել քննություն: Նորամուծությունը ոչ միայն ճանապարհ բացեց գրագետ մարդկանց համար, այլ նաև սահմանափակեց հզոր ընտանիքների ազդեցությունը: Նրա որդին՝ Վան Չուն (Կյոնջո կայսր, 975 – 981 թթ.), շարունակեց բարեփոխումները:

XI հարյուրամյակում Վան Խվի (Մունջոն կայսր, 1946-1083թթ.) կառավարման ժամանակ երկիրը ծաղկում ապրեց: Շատ էին նորամուծությունները, կայսրությունն աղդեց մշակույթի և գրականության վրա:

Վան Ուի (Յեչջոն կայսր, 1105-1122թթ.) թագավորության ժամանակ տարածքները բաժանվեցին գավառների:

XII դարի վերջում ակտիվություն ցուցաբերեցին միացյալ մոնղոլական ցեղերը:

Չինգիզ խանի մահից հետո մոնղոլներն անցան երկրի նվաճմանը: Դիմադրությունը երկար էր և արյունալի: Գրեթե մեկ դար Կորյոն ենթարկվեց մոնղոլական դինաստիային, որը խառնվում էր պետության գործերին և կառավարում տարածքը: Տեղական կառավարիչներին թույլատրվում էր ամուսնանալ բացառապես մոնղոլ աղջիկների հետ: Մոնղոլական կայսրության թուլացման և Չինաստանում ապստամբությունների հաճախականության հետևանքով, XIV դարում մոնղոլները կորցրեցին վերահսկողությունը Կորյոի նկատմամբ:

Գլուխ 5. Կորյո դարաշրջանի մշակույթ:

X-XIV դդ. Կորեայի մշակույթի ամենակարևոր ձեռքբերումներից մեկը դարձավ **տպագրությունը**: Տախտակների կամ փայտափորագրության տպագրությունը Կորեան օգտագործում էր դեռ 8-րդ դարում: Կորյոյի ժամանակաշրջանում գրքատպագրությունն առանձնահատուկ ծաղկման հասավ:

Զենքի արտադրությունը նույնպես դասվում է տեխնոլոգիական ձեռքբերումների շարքին: Կորյոյի ժողովուրդն ակտիվ օգտագործում էր վառոդի զենքեր՝ թնդանոթներ, որոնք արձակում էին քարե լիցքեր: Կորյոյի աղեղնազենները առանձնանում էին նետի թռիչքի հատուկ հեռվությամբ:

Կորյոյի ժամանակաշրջանում զարգացավ **աստղագիտությունը**: Արքունիքում ստեղծվեցին հատուկ գործակալություններ, որոնց խնդիրն էր ուսումնասիրել երկնային երևույթները:

Մեծ ուշադրություն էր դարձվել **բժշկությանը**: Ստեղծվեցին բաժանմունքներ, որոնք զբաղվում էին բուժման տարբեր մեթոդների ուսումնասիրությամբ ու կիրառմամբ և դեղերի արտադրությամբ: Այդ գերատեսչությունների ծառայություններից օգտվում էին բացառապես բարձր խավի ներկայացուցիչները:

Կրթական համակարգը հասավ նոր, ավելի բարձր մակարդակի: Դեռևս 930թ. մայրաքաղաքում բարձր խավի ներկայացուցիչների համար հիմնվեց Կուկխակ բարձրագույն ուսումնական հաստատությունը: 12-րդ դարից Կորյոյում սկսեց զարգանալ մասնավոր դպրոցների համակարգը: Բացի մասնավոր դպրոցներից, որոնք աշակերտներին նախապատրաստում էին պետական քննություններին, գյուղերում սկսեցին ստեղծվել տարրական մասնավոր դպրոցներ:

Կորյոյի ժամանակաշրջանը նշանավորվեց կորեական **գրականության** նշանալի ներդրումով, հատկապես պոեզիայի բնագավառում:

Ճարտարապետությունը ներկայացված է քարե և փայտե շինություններով: Որպես կանոն, պալատների և բուդդայական վանքերի տաղավարները կառուցվում էին փայտից:

Բուդդաների **քանդակագործ** պատկերները պատրաստված էին քարից, ոսկուց և փայտից: Կորեայի ամենահայտնի և միևնույն ժամանակ ամենամեծ Մայտրեյա Բուդդայի քարե արձանը գտնվում է Գվանչխոկս վանքում (Հարավային Չունգչոն նահանգ):

Երաժշտությունը ծեսերի բարդ համակարգի անբաժանելի մասն էր: Բացի այդ, համարվում էր, որ երաժշտության օգնությամբ հնարավոր է բարելավել «ժողովրդի բարոյականությունն ու բնավորությունը»: Ուստի, երաժշտությունը նույնպես անմասն չմնաց պետության ուշադրությունից:

Գլուխ 6. Չոսոն

1392 թ. Կորյոյի զորահրամանատար Լի Սոն Գեն գահազրկեց Կորյոյի վերջին կայսրին և դաժանաբար վարվեց նրա կողմնակիցների հետ: 1392թ.-ին հիմնվեց Լի դինաստիան, որը ղեկավարում էր Կորեան 5 դարից ավել՝ կառավարելով մինչև 1910թ., երբ դարձավ Ճապոնիայի գաղութ: Պետությունը կրկին վերանվանվեց Չոսոն, իսկ մայրաքաղաքը տեղափոխվեց ժամանակակից Սեուլ: Կառավարիչը մեծ ուշադրություն էր դարձնում կենտրոնացված իշխանության ամրապնդմանը, որի հետևանքով սպանվեցին նախկին դինաստիայի բոլոր կողմնակիցները: XV դարում Լի դինաստիայի 4-րդ թագավորի՝ «լուսավոր միապետի» Սեջոնի (Սեչժոն), կառավարման ժամանակ մշակվեց կորեական հանգրլ այբուբենը, պատրաստվեց պատմական ժամանակագրությունը, Կորեայի աշխարհագրական նկարագիրը: Վերջ դրվեց զոհաբերություններին և մոգական արարողություններին: 1394 թ., որպես պաշտոնական կրոն, ընդունվեց կոնֆուցիականությունը: Հատուկ դեր էին խաղում ծիսակարգերը, որոնք կարգավորում էին վարքը ընտանիքում և հասարակությունում: Այժմ դրանցից չորսն են պահպանվել. չափահասության, ամուսնության, թաղման և նախնիների հոգիների կերակրման ծիսակատարությունները:

Շատ հայտնագործություններ և պատերազմական հաղթանակներ, որոնք վերագրում են Սեջոն թագավորին, արել է նրա որդին՝ Մունջոնը՝ Չոսոն թագավորության 5-րդ վանը՝ Սեջոնի ավագ որդին, որը այդ ժամանակ եղել է թագաժառանգ: Ճիշտ է, ոչ մի տեղ դա չի նշվում, սակայն պատմաբանները պնդում են, որ հանգրլ այբուբենը և մի շարք այլ հայտնագործություններ արել է նա:

Թագավոր Լի Սոն Գենի օրոք կառուցվեցին Նամդեմուն (Մեծն հարավային) դարպասները: Շինարարությունը սկսվել է 1395թ. և ավարտվել 1398թ.: Լի Սոն Գեն կառուցեց մայրաքաղաքը և նա կարծում էր, որ կրակը կարող է հասնել ինչպես մինչև Քյոնբոկուք պալատ, այպես էլ ամբողջ քաղաք, քանի որ Սեուլի Քուանաքսան սարը, համաձայն ֆեն շույի, նման է կրակի: Հետևաբար դարպասների վրա Նամդեմուն գրվեց ուղղահայաց, որպեսզի քաղաքը պաշտպանվի կրակից, քանի որ հորիզոնական գրված չինական հիերոգլիֆները նման են կրակի:

Նշանավոր ձեռքբերումներ տեղի ունեցան Սեջոն կայսրի (1418-1450թթ.) ղեկավարման ժամանակ: Ըստ նշանակության, նրա ղեկավարման տարիները համեմատում են Պետրոս Առաջինի դարաշրջանի հետ: Պատմաբանները նրան համարում են ամենախելացի թագավորը Չոսոն դինաստիայի 500 տարվա գոյության ընթացքում:

Գյուղացիների ֆեոդալական շահագործման ուժեղացման պատճառով սկսվեց ապստամբություն: 1467թ.-ը պատմության մեջ մտավ որպես «Գյուղացիական մեծ ապստամբություն», որը տեղի ունեցավ Համնընգ գավառում: XVI դարում գյուղացիական շարժումը գլխավորեց Իմ Կկոկչոն՝ կորեական Ռոբին Հուդը: Նա կորեացի յանբանի (ազնվական) արտամուսնական որդին էր և XVI-XVII դ.-ի վերջին փախստականների ավազակախմբի հետ հեռանում է անտառ և պայքարում աղքատների իրավունքների համար: Հերոսին իշխանությունը բռնեց և գլխատեց, բայց ժողովուրդը նրան չմոռացավ: Իմ Կկոկչոն դարձավ Հո Գյունի «Ասք Հոն Գիլդոնի մասին» վեպի կերպարը, որը համարվում է կորեական դասական միջնադարյան ստեղծագործություն:

1592թ. գարնանը ճապոնացի զինապետ և ղեկավար Թոյոտոմի Հիդեյոշին զավթեց Չոսոնը: Հիդեյոշին երկու անգամ գրավեց Կորեան:Կորեական և չինական զորքերը հասցրեցին մի քանի պարտություններր և 1598թ. ճապոնացիները նահանջեցին Կորեայից: Այդ պատերազմը պատմության մեջ հայտնի դարձավ որպես «Իմջինի» պատերազմ: Ազգային հանընդհանուր ճանաչում ստացավ ծովակալ Լի Սուն Սին (1545-1598թթ.), որին նվիրված արձանը մինչ այսօր Սեուլի կենտրոնում է տեղակայված: Նրա ղեկավարած նավատորմը հարվածներ հասցրեց ճապոնացիներին:

Մանջուրների ներխուժումից հետո 1627 և 1636թթ. Կորեան դարձավ Ցին կայսրի տուրքատու: XVII դարի կեսերին այդ կախվածությունն ունեցավ ձևական բնույթ, սակայն երկրը պատսպարվեց բոլոր օտարերկրյա կապերից:

XIXդ. երկրորդ քառորդից Արևմտյան տերությունները փորձում էին «բացել» երկիրը, բայց կորեացիք ամեն անգամ դուրս էին հանում կամ վառում անգլիական, ֆրանսիական և ամերիկյան նավերը:

1876 թ. Ճապոնիայի հետ ստորագրվեց կողոպտական պայմանագիր: Դրան հետևեցին մի շարք պետությունների՝ ԱՄՆ-ի (1882թ.), Անգլիայի (18832թ.), Ռուսաստանի (1884թ.) և Ֆրանսիայի (1886թ.) հետ կնքված հարկադրական պայմանագրերը: Երկիր թափվեցին օտարերկրյա վաճառականներն ու միսսիոներները, Կորեայի տիրապետության համար համաշխարհային տերությունների միջև սկսվեց կռիվ: Առավել ակտիվ էին ճապոնացիք: Ներանց ներթափանցումը չխանգարեց ժողովրդական ապստամբությանը (խոշորագույնը տեղի է ունեցե 1892թ. հուլիսի 23-ին Սեուլում, որը ճնշվեց Չինաստանի օգնությամբ), 1884թ. բարեփոխումների փորձերին, գյուղացիական պատերազմին Չոն Բոնգ Ջունի (1883-1894թթ.) գլխավորությամբ:

Գլուխ 7. Կերոայի մշակութային նվաճումները XVդ.-IXդ. սկիզբ

Կորեայի համար 15-րդ դարը ամենակարևորն էր երկրի մշակութային պատմության մեջ, քանի որ հենց այդ ժամանակ գործածության մեջ դրվեց կորեական այբուբենը՝ **հանգըլը**, որը բաղկացած էր 28 տառից: Փաստաթղթերի պաշտոնական լեզուն հետագա դարերի ընթացքում շարունակեց մնալ գրավոր չինարենը՝ հանմունը: Այնուամենայնիվ, կորեական այբուբենը օգնեց արագ տիրապետել չինական գրագիտությանը:

Մինչև վերջերս ենթադրվում էր, որ մի խումբ գիտնականներ, Սեջոն թագավորի հրամանանով և գլխավորությամբ, մշակեցին և հրատարակեցին հանգըլը 1443թ.: Այնուամենայնիվ, 1990-ականների կեսերից Հյուսիսային Կորեայում պնդում էին, որ հունմին չոնըմ այբուբենն ուներ իր նախորդները, որոնք սկիզբ են առել Հին Չոսոնի ժամանակաշրջանից, երբ հայտնագործվեց սինջի այբուբենը: Այնուհետև սինջի այբուբենն անընդհատ զարգանում էր: Այն օգտագործվել է Կորյոյի դարաշրջանում:

Հենց «հին» կորեական այբուբենի հիման վրա Սեջոն թագավորը, ենթադրաբար, ստեղծեց հունմին չոնըմ այբուբենը:

Կա ևս մեկ վարկած, որ հանգըլ այբուբենը և մի շարք այլ հայտնագործություններ, որոնք վերագրում են Սեջոն թագավորին, արել է նրա որդին՝ Մունջոնը՝ Չոսոն թագավորության 5-րդ վանը՝ Սեջոնի ավագ որդին, որը այդ ժամանակ եղել է թագաժառանգ: Սակայն պաշտոնապես դա ոչ մի տեղ չի նշվում:

Լի դինաստիայի կառավարման առաջին դարը նշանավորվեց նաև պատմական **գրչության**, **գրականության** և **գրատպության** վերելքով: Պատմական գրության հանդեպ ուշադրությունը միանգամայն բնական էր: Իշխանության եկավ նոր դինաստիա, ուստի անհրաժեշտ էր կազմել և հրապարակել Կորյոյի դարաշրջանի նախորդ դինաստիայի պատմությունը՝ հիմնվելով ավելի վաղ գրված տեքստերի վրա:

Առաջին դարը՝ Լի դինաստիայի հիմնադրումից հետո, նշանավորվեց **գրականության** ոլորտում նվաճումներով: 15-րդ դարն Կորեային տվեց այնպիսի անուններ, որոնք հետագայում դարձան միջնադարյան կորեական գրականության դասականներ:

Պատմագրության, գրականության, արվեստի և գիտության ծաղկումը խթանեց **տպագրության** զարգացումը: Դեռևս 1403թ. մայրաքաղաքում հիմնվեց նոր մեծ տպարան, որի համար ստեղծվեց տառատեսակների հավաքածու:

Կորեայի մշակույթի գանձարանում զգալի ներդրում են կատարել վաղ Չոսոնի **արհեստը**, **գեղանկարչությունը** և **ճարտարապետությունը**:

Բուդդայականությունն ու **կոնֆուցիականությունը** Կորյոյի վերջում և Չոսոնի դարաշրջանի սկզբում, հակամարտում էին «ուսմունք-կրոն» գաղափարներով: Այդ հակամարտությունն ոչ թե գաղափարական էր, այլ տնտեսական և, հետագայում, քաղաքական: Բուդդայական եկեղեցին, ունենալով հսկայական հողատարածքներ, պաշտպանում էր հողի մասնավոր սեփականությունը, որը գերակշռում էր Կորյոյի վերջում: Կոնֆուցիականությունը, որը դարձավ նոր պալատական բարձրաստիճան-բարեփոխիչների «խորհրդանիշը», տեսական հիմքեր ստեղծեց պետական

սեփականության և հողօգտագործման նկատմամբ վերահսկողության ամրապնդման համար։

16-րդ դարն առանձնահատուկ նշանակություն ունի Կորեայի համար՝ **գյուղատնտեսության**, **արհեստների** և **առևտրի** նկատելի զարգացման ժամանակաշրջան էր։ Բացի այդ, փոփոխություններ եղան սոցիալական մտքի ոլորտում։ Նման սոցիալ-տնտեսական փոփոխությունները թույլ տվեցին Հարավային Կորեայի պատմաբաններին ասել, որ 15-17-րդ դդ. կարելի է վերագրել «նոր ժամանակին»։

16-17 դդ. Կորեայի կենտրոնական և հարավային նահանգներում ի հայտ եկավ բանավոր ժողովրդական արվեստի նոր ժանր և սկսեց լայն ժողովրդականություն ձեռք բերել։ Հետագայում բանավոր ժողովրդական արվեստը ստացավ **գրականության** կարգավիճակ։ Ուշ Չոսոնի շրջանի գրական կյանքում ամենաուշագրավ զարգացումը տեղի ունեցավ ժողովրդական գեղարվեստական գրականության ոլորտում, որը արագ զարգացավ և գրվեց կորեական այբուբենի օգտագործմամբ։

17-18 դդ. կորեական **գեղանկարչության** մեջ նկատվեցին նույն միտումները, ինչ գրականության մեջ։ Դա կորեական մոտիվների և պատկերների փոխանցման մեթոդներն էին, ինչպես նաև նկարների բովանդակության միջոցով հասարակ մարդկանց կոչը. նկարներն այժմ գրված էին հանդիսատեսի ավելի լայն շրջանակի համար։ Բնապատկերների նոր տեսակը ստացավ հատուկ անվանում՝ «ամնիջապես տեսած լեռների և ջրերի պատկեր»։

Այս ժամանակաշրջանի Կորեայի **ճարտարապետությունը** չի տարբերվում որևէ նշանակալի նոր ձեռքբերումներով, քանի որ մի քանի դար կորեացի շինարարների բոլոր ջանքերն ուղղված էին բազմաթիվ պալատների, պետական գրասենյակների, վանքերի վերականգնմանը, որոնց մեծ մասը ոչնչացվել էր «Իմջինի» պատերազմի տարիներին։

Բժշկությունը շարունակեց զարգանալ ավանդական ուղղությամբ, որին նոր թափ տվեց Հո Ջունի ամենահայտնի և հռչակավոր աշխատությունը՝ «Կորեական բժշկության գանձարանը», որը մինչև մեր օրերը հայտնի է:

Արևմուտքի մշակույթի մասին տեղեկատվության հիմնական աղբյուրներից մեկը **քրիստոնեությունն** էր, որը սկսեց ակտիվորեն ներթափանցել Կորեական թերակղզի 16-17-րդ դարերի վերջին:

Քրիստոնեություն ընդունած առաջին կորեացին համարվում է բարձրաստիճան պաշտոնյա Հո Գյունը՝ «Ասք Հոն Գիլդոնի մասին» հայտնի պատմվածքի հեղինակը: Նա Կորեայի դեսպանատան կազմում այցելեց Պեկին և այնտեղից բերեց կաթոլիկ գրականություն, մասնավորապես՝ աղոթքների տեքստեր: Քրիստոնեության և բուդդայականության համեմատումը հանգեցրեց նրան, որ Հո Գյունը ընտրեց քրիստոնեությունը: 1618թ. Հո Գյունին մահապատժի ենթարկեցին դավադրության մեղադրանքով:

19-րդ դարի սկզբին քրիստոնեության հալածանքները, որոնք խարխլեցին հասարակության ավանդական կոնֆուցիական հիմքերը, հանգեցրին իշխող վերնախավի կողմից արևմտյան ամեն ինչի մերժմանը՝ ընդհանրապես որևէ կարդինալ փոփոխության չցանկանալուն: Թագավորական իշխանությունը 19-րդ դարի առաջին կեսին դարձավ արգելակ 17-րդ դարում սկսված գործընթացների համար՝ Կորեան դարձնելով շատ ավելի թույլ, քան նրան շրջապատող Ճապոնիան և Չինաստանը՝ չկարողանալով դիմակայել Արևելյան Ասիայում գաղութատիրական լայն շահեր ունեցող արևմտյան ուժերի աճող հարձակումներին:

Գլուխ 8. Կորեան Ճապոնիայի տիրապետության տակ

Կորեայի տիրապետության համար Ճապոնիայի և Չինաստանի միջև կռիվը վերածվեց բաց պատերազմի, որի ընթացքում Չինաստանը պարտություն կրեց և Շիմոնոսեկի պայմանագրի համաձայն (1895թ.) ամբողջությամբ հրաժարվեց բոլոր պահանջներից Կորեայի նկատմամբ: Ճապոնիայի դիրքերի ամրապնդմանը Կորեայում խոչնդոտում էր միայն Ռուսաստանը: 1895 թ. Մին թագուհին՝ Ռուսաստանի աջակցությանբ, փորձեց դուրս գալ Ճապոնացիների դեմ, բայց

ճապոնացի դեսպանի կողմից կազմակերպված հեղաշրջման ընթացքում Մին թագուհուն սպանում են, իսկ դին՝ այրում: 1896թ. Փետրվարի 11-ին Վան Կոջոն փախուստի դիմեց պալատից և թաքնվեց ռուսական դեսպանատանը, որտեղ ապրեց մեկ տարի: Միայն 1897թ. Մարտին նա վերադարձավ իր պալատ, որից հետո ընդունեց կայսրի տիտղոսը, բայց փաստացի չուներ ոչ մի իշխանություն:

Չոսոնի վերջին կայսրերին՝ Կոջոնին և Սուջոնին, հաճախ քննադատում են գործելու անկարողության համար, քանի որ նրանք չկարողացան գտնել անհրաժեշտ դաշնակիցներ և երկիրը համախմբել, կատարել անհրաժեշտ բարեփոխումներ և արդիականացումներ:

1907թ. հուլիսի 24-ին Սուջոն կայսրը ստիպված էր ստորագրել նվաճողական պայմանագիր, որի արդյունքում 35 տարով կորեական տարածքը վերածվեց Ճապոնիայի գաղութի:

1904թ. Սկսվեց Ռուսս-Ճապոնական պատերազմը: Պաշտոնապես Կորեան չէր մասնակցում, բայց պատերազմը՝ սկզբից ծովային, այնուհետև՝ ցամաքային, վարվում էր Կորեայի սահմաններում, նրա նավահանգիստները ճապոնական զորքերի ափ հանելու վայրն էր: Ճապոնիայի հաղթանակը ռուս-ճապոնական պատերազմում թույլ տվեց նրանց 1905թ. Կորեային պարտադրել կնքելու հովանավորության պայմանագիր, որն ամրապնդեց երկրի հպատակային կարգավիճակը: 1906թ. Փակվեց ճապոնական դեսպանատունը և ստեղծվեց գլխավոր դիվանագիտական ներկայացուցչություն: Առաջին գլխավոր դիվանագիտական ներկայացուցիչը (գեներալ-ռեզիդենտը)՝ Իտո Հիրոբումին, փաստացի կենտրոնացրեց իր ձեռքերում Կորեայում ամբողջ իշխանությունը: 1909թ. հոկտեմբերի 26-ին Հարբինում կորեական հայրենասեր Ան Չջուն Գընը սպանեց Իտո Հիրոբումին: Կորեական հայրենասեր Ան Չջուն Գընի անունը մինչ այսօր հիշվում է Կորեայում և համարվում է ժողովրդական ազատագրական պայքարի խորհրդանիշ:

1910թ. Ստորագրվեց ամոթալի պայմանագիր, որի արդյունքում Կորեան մտավ Ճապոնական կայսրության կազմի մեջ:

Կորեայի ժողովուրդը զրկված էր տարրական իրավունքներից, անգամ կորեական լեզուն գտնվում էր արգելքի տակ:

1930-ական թթ. Մանջուրիայում (ուր ապրում էր մոտ 1 միլիոն կորեացի) և Կորեայի հյուսիսային շրջաններում ծավալվեց հակաճապոնական պարտիզանական շարժում, որը ղեկավարում էին կոմունիստները: 1932թ. Կիմ Իր Սենը կազմակերպեց պարտիզանական ջոկատ, որը հետագայում վերաճեց Կորեայի ժողովրդա-հեղափոխական բանակի:

1936թ. Ստեղծվեց Հայրենիքի վերածննդի ընկերություն կամ Հայրենիքի վերածննդի լիգա կազմակերպությունը, որի նպատակն էր ճապոնական տիրապետության վերացումը, անկախ, դեմոկրատական կորեական պետության, ժողովրդական կառավարության ստեղծումը:

Գլուխ 9. Կորեայի ազատագրումը

Ճապոնիայի ջախջախումը Երկրորդ համաշհարհային պատերազմի ժամանակ վերջ տվեց գերիշխանությանը Կորեայում: Կորեայից դուրս հանվեցին բոլոր ճապոնացիք: Հյուսիսային մասն օկուպացված էր Սովետական Միության կողմից, իսկ հարավը՝ ԱՄՆ-ի: 1948թ օգոստոսի 15-ին, Կորեայի ազատագրման երրորդ տարելիցի օրը, հռչակվեց Կորեայի Հանրապետության ստեղծումը: Ի պատասխան, 1948թ. սեպտեմբերի 9-ին երկրի հյուսիսում հռչակվեց Կորեայի ժողովրդա-դեմոկրատական Հանրապետության (ԿԺԴՀ) ստեղծումը:

Գլուխ 10. Պատերազմ Հյուսիսի և Հարավի միջև

1950թ. հունիսի 25-ին բռնկվեց կորեական պատերազմ, որի ընթացքում Փհենյանը մտադրված էր «ազատագրել» հարավը: Հարավը ջախջախումից փրկեց ԱՄՆ-ի բանակը, որը սեպտեմբերի 15-ին տեղակայվեց Ինչհոն շրջանում:

1951թ. հունիսին Սովետական կառավարությունն առաջարկեց հրադադարի վերաբերյալ բանակցություններ, որն ընդունվեց: Բանակցությունները վարում էին շատ երկար և 1953թ. հուլիսի 27-ին Փհանմունջոն գյուղում կնքվեց զինադադարի համաձայնագիր:

Բացի մեծ նյութական և մարդկային կորուստներից, պատերազմի արդյունքում պառակտումն ավելի մեծացավ: Երկար տարիների ընթացքում հարավն ու հյուսիսը դարձան անհաշտելի թշնամիներ:

Գլուխ 11. Ինտերնետային հեղափոխություն և տնտեսություն Հարավային Կորեայում

1990-2000-ականների սահմանագիծը Հարավային Կորեայի համար նշանավորվեց շատ կարևոր իրադարձություններով և գործընթացներով, որոնք գնահատվում են որպես **«Ինտերնետ հեղափոխություն»**: Երկու տարվա ընթացքում Կորեայի Հանրապետությունում ինտերնետի ակտիվ օգտատերերի թիվը չնչին տոկոսից հասավ երկրի բնակչության կեսին:

2000-ականների առաջին կեսում Հարավային Կորեայի համար քաղաքականության, տնտեսության և սոցիալական կյանքի դրական որակական փոփոխությունների ժամանակաշրջան էր: Այս ամենը լավ հիմք դրեց միջկորեական շփումների զարգացման և Կորեական թերակղզում իրավիճակի բարելավման համար:

Իր հերթին, Հյուսիսային Կորեայում մի շարք որակական փոփոխություններ տեղի ունեցան:

Գլուխ 12. Հետաքրքիր փաստեր հարավային Կորեայի մասին

- Կորեացիները չգիտեն, որ ապրում են Կորեայում: Բանը նրանում է, որ «Հարավային Կորեա» բառը չի օգտագործվում երկրի բնակիչների կողմից: Փոխարենը այստեղ ասում են «Հան պետություն» կամ «Հանգուկ»:
- Հարավային Կորեայում ընդհանրապես չեն խոսում անգլերեն, մարդիկ չգիտեն այն և չեն էլ փորձում սովորել, հիմնականում խոսում են միայն կորեերեն: Ինչ լեզվով էլ, որ հարցնեք նրանց, նրանք ձեզ պարզապես կորեերեն կպատասխանեն:
- Նորածին երեխայի տարիքը համարվում է 1 տարեկանը՝ 0-ի փոխարեն, որն ընդունված է շատ այլ մշակույթներում: Նոր տարուց հետո բոլորն ինքնաբերաբար մեծանում են մեկ տարով, նույնիսկ եթե նրանց իրական ծննդյան օրվան դեռ շատ կա:
- Ընտանիքներում հարաբերությունները հիմնված են ծնող-երեխա սկզբունքի վրա: Շատ հազվադեպ է լինում, որ ընտանիքի մեծերի և երեխաների միջև ընկերական հարաբերություններ են: Հարկ է նաև նշել, որ երեխան մինչև

որոշակի տարիք չունի իր կարծիքը՝ ճշմարտությունն այն է, ինչ ասում է մայրիկը կամ հայրիկը:

- Դպրոցական կրթությունը դժվար է, քանի որ երեխաները ստիպված են լինել առաջատար, ստանալ բարձր գնահատականներ և անգիր անել տեղեկությունները: Վաղ մանկական տարիքում երեխաներին շատ բան են թույլ տալիս, որից հետո մեծ ճնշում է գործադրվում ուսման պատճառով: Միջին դպրոցը քրտնաջան ուսուցման սկիզբն է, բուհի ավարտական քննությանը պատրաստվելու համար: Միջին հաշվով աշակերտները սովորում են 12-13 ժամ: Դասերի ավարտից հետո տրվում է hagwon՝ դասամիջոցի նման մի բան: Այնտեղ աշակերտները կատարում են իրենց տնային աշխատանքները, հաճախում են լրացուցիչ պարապմունքների: Շատ դեռահասներ չեն դիմանում նման ճնշմանը, և լինում են դեպքեր, երբ դա նույնիսկ ավարտվում է ինքնասպանությամբ:
- Պետական համալսարանների դասավանդողները կարող են աշխատանքից ազատվել միայն նախագահի հրամանով: Այդ մասնագիտությունը չափազանց հարգված է և բարձր վարձատրվող:
- Մարդիկ ավտոմատ կերպով ստանում են բնութագիր՝ ելնելով արյան խմբից: Արյան յուրաքանչյուր խմբին բնորոշ են դրական և բացասական հատկություններ: Երկրորդ խմբին պատկանող մարդիկ համարվում են պահպանողական և ճշտապահ, բայց նրանք կարող են նաև լինել ձանձրացնող, կաշկանդված և ինտրովերտ: Երրորդ խումբ ունեցող մարդիկ կարող են խաբել զուգընկերներին, նրանք հաճախ ծույլ են և անհամբեր: Ինչ վերաբերում է չորրորդ արյան խմբին, ապա նրանք պետք է լինեն սառնասիրտ, բայց դաժան, էլիտար ու քննադատական: Արյան առաջին խումբը նշանակում է, որ մարդը պատվախնդիր է և մարզիկ:
- Սննդին մեծ ուշադրություն են դարձնում՝ կորեացիները սննդի մի տեսակ պաշտամունք ունեն: Եթե նրանց հետևեք, ապա կնկատեք, որ տրանսպորտով երթևեկելիս հեռախոսում նայում են սննդի նկարներ, հաց ուտելիս իրենց են նկարում, խոսակցության ընթացքում պատմում են ուտելիքի մասին: Նույնիսկ նրանց ողջույնը թարգմանվում է որպես «Դուք արդեն կերե՞լ եք»: Ասիացիները

հաց ուտելիս սիրում են ճպճպացնել, սակայն դա ոչ թե վատ վարքագծի դրսևորում է, այլ ուտեստի շատ համեղ լինելու ցուցանիշ:

Գլուխ 13. Հետաքրքիր փաստեր հյուսիսային Կորեայի մասին

- Հյուսիսային Կորեայի բնակիչներն իրենց հայրենիքն անվանում են «Առավոտյան թարմության երկիր» («Չոսոն»):
- Ջուչհե օրացույցը հաշվարկի մեթոդ է, որն օգտագործվում է ԿԺԴՀ-ում հիմնադրման օրվանից: Ջուչհե օրացույցում զրոյական տարի չկա, այն հաշվվում է Կիմ Իր Սենի ծննդյան ամսաթվից՝ 1912թ.-ից, և նրա ծննդյան տարեդարձը զրո համարելը խիստ անհարգալից և նույնիսկ ռիսկային է:
- Բնակիչները կարող են ընտրություններին մասնակցել 17 տարեկանից: Ընտրություններն անցկացվում են 5 տարին մեկ, և քվեաթերթիկում միշտ լինում է միայն մեկ թեկնածու:
- Նրանցից պահանջվում է գրանցել իրենց հեռուստացույցները համապատասխան մարմիններում: Դիտելու համար հասանելի է 3 ալիք, որպեսզի այլ բան դիտելու գայթակղություն չառաջանա: Հեռուստացույցի կառավարումը փակված է, իսկ հաճախականության կարգավորումներն արգելափակված են:
- Երկրի բնակիչների մեծամասնության համար համացանցի հասանելիությունը փակ է: Երկիրն ունի իր սեփական ցանցը՝ «Gwangmyeong», որը պարունակում է միայն գիտական և տեխնիկական թեմաներով հոդվածներ:
- Պետական ռադիոն չի կարելի անջատել նույնիսկ սեփական տանը: Միայն թույլատրվում է նվազեցնել ռադիոյի ձայնը:
- Հյուսիսային Կորեայի խոհանոցը չինականի և ճապոնականի սիմբիոզ է: Նրանում գերակշռում են տարատեսակ նախուտեստներ, իսկ տարածաշրջանային մակարդակով չիլի և սխտոր դնում են գրեթե ցանկացած ուտեստի մեջ:
- Բնակիչները կարող են ունենալ միայն կարճ սանրվածքներ, որոնց միայն 28 տեսակն է հաստատված երկրի ղեկավարության կողմից:
- Եթե այլ երկրում բնակվող բարեկամը կամ ընկերը մեքենա է նվիրում, ապա նա պարտավոր է նույն մեքենայից տալ պետությանը:

- Հյուսիսային Կորեայում դեռ հրապարակային մահապատիժներ են իրականացվում։
- Գիշերը էլեկտրաէներգիան խնայելու համար հյուսիսի կորեացիների տների էլեկտրամատակարարումն անջատվում է, միացված է միայն ղեկավարների հուշարձանների լուսավորությունը։
- Տարբեր հանցագործությունների համար դատապարտված հյուսիսի կորեացիներն իրենց պատիժը կրում են ողջ ընտանիքով։ Եթե այդ ընթացքում երեխաներ ծնվեն, ապա հաջորդ երկու սերունդները դատապարտված են իրենց ողջ կյանքն անցկացնել բանտում։
- Հյուսիսային Կորեան գրեթե 100%-անոց գրագիտություն ունեցող երկիր է։ Հաջողության գաղտնիքը պարզ է՝ գրագիտությունը նշանակում է առաջնորդի անունը ճիշտ գրելու կարողություն։
- Հյուսիսային Կորեան ունի աշխարհում չորրորդ ամենամեծ մշտական բանակը՝ 1.190 մլն զինվորով։

Եզրակացություն

Ինչպես տեսնում եք, աշխատանքի արդյունքում ունեցանք լիարժեք պատկերացում և ձեռք բերեցինք հարուստ տեղեկություններ Կորեայի մասին: Բացահայտվեցին որոշ գաղտնիքներ, որոնց մասին գրեթե ոչ ոք չգիտեր և ոչ մի տեղ չի ցուցադրվել: Ստացանք ներածության մեջ նշված բոլոր հարցերի պատասխանները:

Աշխատանքի հիմնական գաղափարը նրանում էր, թե ինչ փոփոխությունների կարող է ենթարկվել պետությունը արտաքին և ներքին քաղաքականության ազդեցության հետևանքով: Չնայած բազմաթիվ պատերազմների նրանք կարողացան պահպանել ո՛չ միայն իրենց սովորույթները, այլ նաև յուրօրինակությունը, մշակույթը և լեզուն: Նրանք ստեղծեցին իրենց այբուբենը՝ հանգը, որը դարձավ կարևորագույն ազգային արժեք:

Օգտագործված գրականության ցանկ

- **С.О. Курбанвов – История Кореи с древности до начала XXI в.**
- ***Корея. 5000 лет выживания*** - *www.youtube.com/watch?v=A0XhPt4-PC8&list=RDCMUC570zlUD71m5zrqbbfp11mA&start_radio=1&t=28s*
- ***Корё***–*www.koryo-saram.ru/*
- ***История Кореи*** -*www.vseokoree.com/vse-o-koree/istoriya-korei*
- ***История Кореи*** -*www.mojseul.ru/istoriya-korei*
- ***История Южной Кореи*** -*www.litmir.me/br/?b=211271&p=1*
- ***Сонгюнгван*** -*www.koreatriptips.com/ru/tourist-attractions/336157.html*
- ***Sejong the Great*** -*www.asiasociety.org/education/king-sejong-great*
- ***Намдэмун*** -*www.tury.club/sight/vorota-sunnemun-vorota-namdemun-693*
- ***Кёнбоккун -****www.tonkosti.ru/Дворец_Кёнбоккун_в_Сеуле*
- ***Gwanaksan -****www.en.wikipedia.org/wiki/Gwanaksan*
- ***Hon Gil Don -****www.youtube.com/watch?v=uizWOz2nojs*
- ***Хо Гюн–****www.koryo-saram.site/ho-gyun/*
- ***Тоётоми Хидэёси–****www.topwar.ru/129045-toetomi-hideesi-iz-krestyan-v-samurai-chast-1.html*
- ***Тоётоми Хидэёси 2–****www.topwar.ru/129396-toetomi-hideesi-iz-krestyan-v-samurai-chast-2.html*
- ***Имдинская война -****www.hrono.ru/sobyt/1500sob/1592imdin.php*
- ***Имдинская война–****www.pikabu.ru/story/imdinskaya_voyna_5517911*
- ***Адмирал Ли Сун Син–****www.hrono.ru/biograf/bio_l/li_sun_sin.php*
- ***Династия Цин–****www.chinatrips.ru/guide/culture/qing-dynasty.html*
- ***Jeon Bong-jun -****www.knowingkorea.org/contents/view/184/General-Jeon-Bong-jun-leader-of-the-Donghak-Peasant-Movement*
- ***Китай-****www.ruchina.org/chinahistory.html*
- ***Япония–*** *www.oriental.hse.ru/syo/vl_asys_20181205*
- ***Ито Хиробуми -****www.peoples.ru/state/minister/japan/hirobumi_ito/*
- ***Ан Чжин Гын–****www.hmong.ru/wiki/Ahn_Jung-geun*
- ***Корея в конце 19 — начале 20 веков.–*** *www.maximus101.livejournal.com/32438.html*
- ***Японо-китайская война (1894—1895)–****www.rgavmf.ru/books/obzor-glavneyshih-kampaniy-i-srazheniy-parovogo-flota/yapono-kitayskaya-voyna-1894-1895-gg*
- ***Русско-японская война -*** *www.prlib.ru/history/1181970*
- ***Japanese General Government Building, Seoul–*** *www.artsandculture.google.com/entity/japanese-general-government-building-seoul/m0cy_n2*
- ***Движение за независимость Кореи–*** *www.artsandculture.google.com/entity/m0635m4?hl=ru*
- ***Факел, зажженыйКимИрСеном–*** *www. juche-songun.ru/joomla/index.php?option=com_content&view=article&id=411:2011-01-05-11-40-32&catid=1:latest-news&Itemid=50*
- ***Война двух Корей -****www.kommersant.ru/gallery/2498912#id=1037924*

- ***ПочемуСевернаяиЮжнаяКореяразделились–*** *www. interesnosti.com/1368701445654710625/pochemu-severnaya-i-yuzhnaya-koreya-razdelilis/*
- ***10 фактов о жизни в Корее, которые удивляют иностранцев –*** *www.tripmydream.com/media/podborki/10-faktov-o-zhizni-v-koree-kotorue-ydivljajut-inostrantsev*
- ***9 необычных фактов о Южной Корее–****www.city.travel/blog/?p=20402*
- ***Интересные факты об образовании в Южной Корее –*** *www.luckycosmetics.ru/interesnye-fakty-ob-obrazovanii-v-yuzhnoj-koree*
- ***Едем в Южную Корею -****https://34travel.me/post/edem-south-korea*
- *Интересных Фактов О Северной Корее– www.anotherlife.info/50-interesnyx-faktov-o-severnoj-koree/*
- ***25 интересных фактов о КНДР–*** *www.http://стофактов.рф/25-интересных-фактов-о-кндр/*